

նոր չարութիւն չսորվեցրնելու , ար-  
թուն կենալու որ ուրիշները չարութի  
չսորվեցրնեն , ջանալու որ միայն առա-  
քինութեան սիրովը վառուի անիկայ ,  
կրնայ պատճառ ըլլալ որ այն տղան  
հրեշ մը դառնայ : Ի՞այց ինչու այսպիսի  
անզօր խօսքեր բանեցընեմու թողում  
այն ահաւոր ու ամենասուրբ խօսքերն  
որ ըսաւ փրկին մեր , տղոց երկրպագե-  
լի բարեկամը . — “ Ով որ այսպիսի  
,, տղայ մը իմ անունովս ընդունի , ը-  
,, սաւ , զիս կ'ընդունի . բայց ով որ աս  
,, ինծի հաւտացող պղտիկներէն մէկուն  
,, գայթակղութեան պատճառ ըլլայ ,  
,, լաւ եր այնպիսւոյն որ վզէն ջաղացքի  
,, քար մը կապէին ու ծովը ձգէին ,, :

Որոնք որ քեզմէ քսնի մը տարի պրզ-  
տիկ են , որոնք որ այն պատճառաւ քու  
օրինակիդ ու խօսքիդ կրնան հետեիլ ,  
դուն զիրենք քու զաւակացդ տեղը սե-  
պէ . հետերնին այնպիսի ներողամտու-  
թեամբ ու միանգամայն անաշառու-  
թեամբ վարուէ՝ որով կրնաս չարէն զի-  
րենք հեռացընել ու 'ի բարին յորդորել :

Տղաք բնութեամբ ինչ որ տեսնեն՝  
ան կ'ընեն . թէ որ տղու մը չորս դին  
գտնուող չափահանները բարեպաշտ ,  
ծանրակաց , բարեսիրու են , տղան ե-  
տեւէ կ'իյնայ անանկ ըլլալու , և կ'ըլ-  
լայ : թէ որ չափահանները հաւատոյ  
բաներուն պաղ , ցած , ու չարասիրու  
են , տղան ալ անոնց պէս անպիտան  
մարդ մը կ'ըլլայ :

Կաւ այն տղոց ու պատանեաց հետ  
ալ աղէկ վարուէ՝ որ շատ անգամ չես  
տեսներ , ու թերեւս կենացդ մէջ մէկ  
անգամ մը միայն առիթ պիտի ունենաս  
հետերնին խօսելու . թէ որ տեղը գայ՝  
առաքինութիւն սորվեցընող խօսք մը  
ըսէ իրենց : Ի՞նչ քու խօսքդ , այն հա-  
մեստ նայուածքդ կրնայ զիրենք ցած  
մտածութենէ մը հանել , կրնայ սրտեր-  
նին վառել որ լաւ մարդկանց համար .  
մանը արժանի ըլլալու աշխատին :

Թէ որ պատանի մը , որուն վրայ յօս  
կայ երեելի մարդ ըլլալու , քու վրադ  
գնէ իր վստահութիւնը , մտերիմ բա-  
րեկամ եղիր իրեն , ուղիղ և խելացի

խրատներով օգնէ իրեն . ամենակին մի  
շողոքորթեր զինքը , գովելի գործքերը  
գովէ , բայց անվայելները սաստիկ պար-  
սաւներով վար զարկ :

թէ որ պատանի մը տեսնես որ մո-  
լութեան ետեւէ է , թէպէտ և հետը  
մտերիմ ընտանութիւն չունենաս՝ տե-  
ղը եկած ատենը մի քաշուիր ձեռքդ  
երկրնցընելու և զինքը ազատելու : Ի՞ր-  
բեմն այն տղան որ չար ձամբան բռներ  
կ'երթայ՝ մէկ կանչելու մը՝ մէկ ակնար.  
կութեան մը միայն կը կարօտի որ ա-  
մընայ ու դառնայ ուղիղ ձամբան մռնէ :

Ի՞րդեօք քու զաւակացդ ինչ կրթու-  
թիւն պիտի տաս . — աս բանս չես  
կրնար հասկընալ՝ ինչուան որ աղէկը  
գուն չունենաս : Ունեցիր , որ կարե-  
նաս նաև տալ :

ՓԵԼԱՔՈՅ

ՆԿԱՐԱԳՒՐ

ՉԳՅԳՈՂ ԲՆՈՒԵՒԻՆ :

ՉԳՅԳՈՂ բնութիւնը ծուլութե-  
նէ քիչ տարբերութիւն ունի . բայց  
այսպէս կը տարբերի . ծոյը ամենակին  
չուզեր , ու միտք չունի գործք մը ընե-  
լու , ձգձգող կ'ուզէ , միտք ունի բայց  
միշտ վաղուան կը ձգէ , կը կարծէ որ  
վաղը աւելի դիւրութեամբ պիտի ընե-  
լունելու գործքը , կամ թէ առանց աշխա-  
տելու : Ի՞նչ գործք ընելու վրայ խօսք  
բանաս , կենանք մինչեւ սա զբաղմունք-  
ները անցնի կ'ըսէ . չի մտածեր որ զբաղ-  
մունքները անցնելիք չունին՝ քանի որ  
կ'ասլինք . ուստի ըսել է որ միտք չու-  
նի ան գործքը ընելու :

Գարծքին դժուարութիւնները միայն  
կը մտածէ , ոչ երբէք դժուարութիւն .  
ներուն գեղը , որոնց մէկն ալ սկսիլն է .  
ինչպէս առակն ալ կ'ըսէ որ “ Գարծքի  
մը սկսելը գործքին կէսն է ” : Ի՞րդէն  
մարդս իր բոլոր կեանքը մտածելով  
կ'անցընէ , ու մտածածներուն մեծ մա-  
սը առանց 'ի գործ գնելու կը մեռնի .

իսկ երբոր ձգձգող բնութիւն ունենայ , բոլոր մտածածները անդիի աշխարհքը պէտք է որ ընէ :

Ձգձգող բնութեան վնասները այնափ աւելի ծանր են , որչափ որ չեն երեար . աս բնութիւնը ունեցողը՝ շատ անգամ խոչեմ ու հանդարտ մարդու տեղ կ'անցնի , բայց ամենևին ներհակն է : Դարձքի մը պարագաները կը մտածեն , բատ այնմ իրեն խորհուրդ կու տան . մէկէն ընելու ըլլայ , գործքը առաջ կ'երթայ կը յաջողի : Ի՞ն կը ձրգձգէ , պարագաները կը փոխուին , արւած խորհրդովդ գործքը չի յաջողիր կը խրի . դուն անխոչեմ կը սեպուիս՝ անիկայ ձգձգող սեպուելու տեղ :

Ձգձգող բնութիւնը հիներուն երեակայած նաւակալ ծուկը կը նմանի , որ նաւուն ետելը կպչելու որ ըլլայ , ամէն յաջող քամի , ամէն ջանք չի բաւեր նաւը առաջ տանելու : ( Կովու հանդարտութեան կը նմանի , որ քան զամէն ժայռ , քան զամէն մրրիկ աւելի արգելք է նաւուգ առաջ երթալուն , ասանկ ալ ձգձգելը ամէն բանի արգելք է :

Ձգձգող բնութիւն ունեցողին հետ գործք մը ունենաս ընելու՝ հոգիդ կ'ելլէ , մինակ ընելէն շատ աւելի կը յոդնիս , չուանով նաւ քաշելու պէս զինքը պիտոր քաշես որ շարժի . բայց ինքը կը կարծէ որ իր չի շարժելովը գքեզ արտօրանքի վտանգներէն կը խալըսէ : Ինքը բանի մը ձեռք չի զարներ , դուն ձեռք զարնես , ու յանկարծ անյաջող երթալու որ ըլլայ , “ Տեսար , ես անոր համար ըրի ատ բանը ” , կ'ըսէ . թէպէտ և ծուլութեան ու վախկուտութեան համար ըլլայ ընելը : Ի՞անի մը ձեռք չի զարներ , որպէս զի չախալի . բայց ամէնքը իրեն պէս ընելու որ ըլլային , աշխարհքս արձաններու թանգարան մը կը դառնար , ու ամէնքնիս ալ մէջը շարուած արձաններ : ( ՈՒէ որ մարդս չի քալէ՝ վախնալով որ յանկարծ կը սահի կ'ինի , անդամալոյծ կը դառնայ . թէ որ երկրագործ յարեն չի ցաներ՝ վախնալով որ յանկարծ կարկուտը կը զարնէ , հաց չէինք ունենար : Բայց ձգձգող

մարդը “ Ի՞ւած աղեկ մը մտածենք , ըսելով՝ ինքը զինքը կը խաբէ . չի մտածեր որ մտածելս ալ չափ ունի . թէ որ մտածելովդ վարուցանի ժամանակը անցնելու ըլլայ՝ պարապ կ'երթայ ցանածգ . մինչեւ որ տաքցուցած երկաթէդ ինչ շինելդ մտածես , երկաթը կը պազի . ամէն բանը իր ատենովը կը յաջողի : “ Ի՞այց դիւրին բան չէ , կ'ըսէ , ձեռք զարնելու բանս , . չի մտածեր որ եթէ դիւրին բան ըլլար՝ ան ատենու կատարեալ ծուլութիւն կ'ըլլար ըրածը . գըժուարութիւններն են որ զինքը սոսկ ձգձգող ըսուելու արժանի կ'ընեն : Ի՞ւանց գժուարութեան խիստքիչ գործք կ'ըլլայ , նաև պտուղ մը ուտելու համար՝ բաց ’ի հասցընելու աշխատանքէն՝ կեղեն ու կուտն ալ հանես պիտոր . վարդ ալ ժողվելու որ ըլլաս , մատերդ քանի մը փուշ խայթելը աչքդ առնես պիտոր . յիշէ առակը “ Ով որ գործքը չի սկսիր ամէն գժուարութիւն վերնալու սպասելով՝ գետին ջուրը ցամքելուն կը սպասէ՝ որ զիմաց անցնի ” :

\*

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Արշակունիք :

Բ .

“ Ի հայս ու ինչ մեծագոյն և , ի Պարս՝ քան զիրշակուն և տոհմ , որ և յԱրքա , համեւ սերեցան ասա , :

Ս . ԳՐ . ԼՈՒՍԱԿՈՐԴ

ՄԵԾ նահապեսն Արքահամ իր Այտա կնոշն մեռնելն ետեւ՝ ծերութեանն ատեն Աստուծոյ ազդմամբ՝ որ կ'ուզէր զինքն շատ ազգերու հայր ընել . Վետուրա կամ Աենդուրա անունով